

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 237-Ա

7 օգոստոսի, 2020 թվական

**ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հունիսի 19-ի 319-Ա հրամանի հիման վրա 2020 թվականի օգոստոսի 6-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեում իրականացվող) գործունեության ծավալումը՝


- 1) «Արմինե» ԱԿ, Կոտայքի մարզ, ք.Չարենցավան, Շահումյան 49/1 (ՀՎՀՀ 02803416).
- 2) Ա/Ձ «Լուսիկ Ներսիսյան», Կոտայքի մարզ, ք.Չարենցավան, Շահումյան 15 (ՀՎՀՀ 40569406).
- 3) Ա/Ձ «Վոլոդյա Վարդանյան», Կոտայքի մարզ, ք.Չարենցավան, 3-րդ թաղամաս, 14 (ՀՎՀՀ 40013249).
- 4) «Դրայվ-2014» ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք.Չարենցավան, Եսայան 8/10 (ՀՎՀՀ 03020699).
- 5) Ա/Ձ «Արսեն Համբարձումյան», Կոտայքի մարզ, գ.Առինջ, Մաշտոցի 65/1 (ՀՎՀՀ 40569406).
- 6) Ա/Ձ «Ժենյա Բարսեղյան», Կոտայքի մարզ, գ.Առինջ, 21-րդ փողոց, 1 (ՀՎՀՀ 43173548):


2. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոլյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողների գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 07/08/20 17:52:33 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ